ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2024 թվականի փետրվարի 28-ին

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ» կետով.

«զ) այն դեպքերի, երբ վիճարկվում է չվճարված հարկային պարտավորությունները գանձելու և (կամ) չվճարված պարտավորության չափով հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գույքային իրավունքների գրանցում կամ հաշվառում նախատեսող շարժական կամ անշարժ գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ որոշումը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնում ~~2026 թվականի հունվարի 1-ից~~ հարկային մարմնի՝ «Հարկատու 3» համակարգի «Իրավական վարույթներ» ենթահամակարգում չվճարված հարկային պարտավորությունների գանձման գործընթացի և արգելանք կիրառելու մասով մոդուլների գործարկման մասին հայտարարության հրապարակմանը հաջորդող օրվանից:

(2-րդ հոդվածը փոփ. 04.12.24 ՀՕ-496-Ն)

Հանրապետության նախագահ **Վ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**

2024 թ. մարտի 25

Երևան

ՀՕ-109-Ն